ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ՄԱՐՄԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊՈԱԿ
Կոդ 05802685

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКАЯ ОБЛАСТЬ
<<МАРМАШЕНСКАЯ
СРЕДНЯЯ ШКОЛА>> ГНКО
код 05802685

25 ապրիլի 2019 թ.

թիվ_____

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Տ. Պետրոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում << Մարմաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ կերպարվեստի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի հայտարարությունը:

Տնօրեն՝ /Հ. Մխիթարյան/

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 6952-19
25 04 19թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի << Մարմաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ կերպարվեստի ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման /3 դասաժամ, աշխատավարձը՝ 16091 դրամ/:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից <u>մինչև մայիսի 23-ը</u> ներառյալ՝ամեն օր ժամը 10^{00} – 15^{00}, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթն անցկացվելու է Շիրակի մարզի << Մարմաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ում 2019 թվականի մայիսի 30-ին ժամը 13^{00}-ին:

Հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Մարմաշեն:

Մրցույթում հաղթողի հետ կկնքվի հիմնական աշխատանքային պայմանագիր:

Տեղեկությունների համար զանգահարել 099 572056 հ/ հ-ով:

Տնօրեն՝ / Հ. Մխիթարյան /